ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

«07» 04 2018 թ. N 25-24/3

ԱՇՈՏ ՀԱՅԿԱԶԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ «ՄՈՄԻԿ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ» ՈՍԿԵ ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, դրա կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1294-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1111-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 15-րդ կետի 18-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայ նշանավոր ճարտարապետների կյանքին ու գործունեությանը նվիրված լավագույն գիտահետազոտական աշխատանքների տպագիր հրատարակությունների համար, ինչպես նաև ծննդյան 70-ամյակի կապակցությամբ՝ «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան - ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական քարտուղար Աշոտ Հայկազի Գրիգորյանին պարգևատրել «Մոմիկ ճարտարապետ» ոսկե մեդալով:

Ն.ՍԱՐԳՍՅԱՆ

«07» 04 2018թ.
ք. Երևան